2. Հողի կադաստրային արժեքների տարբերությունը 1 քառակուսի մետրի համար 4157.8 դրամ է, որը 1600.0 քառակուսի մետրի համար կազմում է 6 652 480 (վեց միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

3.Վերը նշված 0,16 հա հողամասը հանել գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նշանակության հողերի հաշվեկշռում:

4.Օրինականացնել Արտուշ Անդրանիկի Զաքոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0108-0026 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված՝ 78.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով հանգստի սենյակը, 43.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը և 11.7 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համաձայն՝ համապատասխան համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Զիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր հանգստի սենյակի, լողավազանի և պարսպի համար կազմում է 3938 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա գումարը կազմում է 526 510,60 (հինգ հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր տասը դրամ վաթսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 21
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 641-Ա

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին ընդունված N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի մայիսի 25-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2026 թվականի մայիսի 21-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026JSVJTT), հողամասի սեփականատեր Հովհաննես Խաչատուրի Բաղդասարյանի 2026 թվականի հունիսի 2-ի N 3066 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող, Հովհաննես Խաչատուրի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-074-0015-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հողամասի վրա կառուցված՝ 20.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով արհեստանոցը, 46.9 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 6.4 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 9.9 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 8.7 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԳԵՕ ՄԵՓ ՓՐՈՋԵՔԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր ծածկի համար կազմում է 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր արհեստանոցի, ծածկերի և պարսպի համար կազմում է 853.2 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 105 171,12 (մեկ հարյուր հինգ հազար հարյուր յոթանասունմեկ Հայաստանի Հանրապետության դրամ տասներկու լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի 900325181155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 21

գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ Ու Մ

22 հուլիսի 2026 թվականի N 642-Ա

### ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 154-Ա և 2025 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 178-Ա որոշումներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական ղեկավար Հովհաննես Մխիթարյանի 2026 թվականի հուլիսի 13-ի թիվ 87 զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Հուշարձանների փողոց տուն 11 հասցեի բնակիչ Վանուշ Հենրիկի Նիկողոսյանի 2026 թվականի հուլիսի 13-ի թիվ 4029 դիմումը՝ Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի բնակիչ Սարգիս Պարթև Սաթումյանի (մահացած՝ 2026 թվականի հուլիսի 11-ին, մահվան վկայական՝ ԲԲ 159194) հուղարկավորության ծախսերի հատուցման համար՝ ցուցաբերել սոցիալական աջակցություն 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի ընտանիքի անդամին կորցրած սոցիալապես անապահով բնակիչ Վանուշ Հենրիկի Նիկողոսյանին ցուցաբերել սոցիալական աջակցություն՝ իր հայր Հենրիկ Վանուշ Նիկողոսյանի (մահացած՝ 2026 թվականի հուլիսի 11-ին, մահվան վկայական՝ ԲԲ 159113) հուղարկավորության ծախսերի հատուցման համար՝ 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին հանձնարարել կատարել համապատասխան ձևակերպում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հուլիսի 22
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 643-Ա

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 23062026-04-0057 վկայականը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0103-0107 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության 0.0217 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես վարելահող:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.0217 հեկտար մակերեսով հողամասը, հանել գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 644-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 23062026-04-0034 վկայականը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0526-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության 0.0353 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես վարելահող:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.0353 հեկտար մակերեսով հողամասը, հանել գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 645-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 539-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ին ընդունված թիվ 1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ ՄՈ/28-2021 կարգադրությամբ ստեղծված՝ բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 23-ի թիվ 09 նիստի եզրակացությունը, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 01/14/05141 գրությունը, հողամասի սեփականատեր Հրաչ Արամի Մանչեկյանի կողմից տրված լիազորագիրը և լիազորված անձ Միքայել Արտակի Հակոբյանի 2026 թվականի մայիսի 11-ի թիվ 2763 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ Հրաչ Արամի Մանչեկյանի անվամբ գրանցված՝ 04-030-0175-0011 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 4.1957 հեկտար մակերեով հողամասից՝ 2.0857 հեկտար մակերեսով բարձրարժեք /խաղողի այգի/ հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

2. Ուժը կորցրած ճանաչել հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող բարձրարժեք հողատեսքն ավելի ցածրարժեքի փոխադրելու մասին» թիվ 539-Ա որոշումը:

3.Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 646-Ա

### ԱՆԱՀԻՏ ԳԱՍՊԱՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին ընդունված N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի հունիսի 22-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 23-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024CLHQT7), հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Գասպարի Բաղրամյանի 2026 թվականի հունիսի 26-ի N 3776 դիմումը. **որոշում եմ՝**

1.Օրինականացնել Անահիտ Գասպարի Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Խ. Աբովյան փողոց, 1 շենքի N 15 բնակարանին կից՝ 28.39 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կցակառույցը և ինքնակամ բացված 1 դուռը՝ համաձայն «Զավեն Բաբայան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կցակառույցի համար կազմում է 590,7 Հայաստանի Հանրապետության դրամ, ինքնակամ բացված 1 դռան համար կազմում է 1969 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 18 738,97 (տասնութ հազար

յոթ հարյուր երեսունութ ՀՀ դրամ իննսունյոթ լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 հուլիսի 2026 թվականի N 647-Ա

## ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՇԻԿԻ ՂԱԼԱՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին ընդունված N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոններ էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի հուլիսի 10-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2026 թվականի հունիսի 2-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026GXRARS), հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Ռուզաննա Սաշիկի Ղալաչյանի 2026 թվականի հուլիսի 14-ի N 4083 դիմումը. **որոշում եմ՝**

1.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Րաֆֆու փողոց 1-ին փակուղի 6 հասցեում գտնվող՝ Ռուզաննա Սաշիկի Ղալաչյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0037-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 7.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղ՝ աստիճանահարթակը, 164.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 9.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանահարթակը, 3 ինքնակամ բացված պատուհանը և 1 ինքնակամ բացված դուռը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղ՝ ատիճանաhարթակի, բնակելի տան 1-ին հարկի, աստիճանաhարթակի և յուրաքանչյուր ինքնակամ բացվածքի համար կազմում է 1969 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 364 461,90 (երեք հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր վաթսունմեկ Հայաստանի Հանրապետության դրամ իննսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 648-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ 506-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 18-ի «Կարինե Ջոհրայի Հակոբյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման մասին» N 506-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) Որոշման 1-ին կետում «Անի թաղամաս 2-րդ շենք N 1» բառերը և թվերը փոխարինել «Անի թաղամաս 3 շենք 7» տառերով և թվերով,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 649-Ա

**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի 1855-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Մաշտոցի փողոց 17 շենքի բազմաբնակարան շենքի բնակիչների դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքիՄերձավան գյուղի Մաշտոցի փողոց 17 շենքի բազմաբնակարան շենքի զբաղեցրած 602,0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառական նշանակությամբ հողամասը փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 602,0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, հանել համայնքային սեփականության հողերի հաշվեկշռից և ներառել քաղաքացիների սեփականության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հուլիսի 2026 թվականի N 650-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրված թիվ Կ-02072026-04-0186 որոշումը, քաղաքացի Անդրանիկ Մաթևոսի Մեհրաբյանի 2026 թվականի հուլիսի 13-ի թիվ 4034 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0406-0001-ից կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության 0.01056 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես վարելահող:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.01056 հեկտար մակերեսով հողամասը, հանել գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հուլիսի 23
գ. Փարաքար